

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՐՏՈԼՈՒՑ ՄԻՆՉ
ՍԿԻՒՏԱՐ — ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ

Պոլոսյ Սկիւտար թաղամասի գլխաւոր փոխաւոր պատմութեան և գործունէութեան հետազոտութիւնը մեզ անհրաժեշտաբար տանում է դէպի նրա համարենոյթ նախորդները, որոնք օրինակ և ուսումնականութեան ու հոգեւոր-բարոյական ազդիւր են հանդիսացել նրա համար: Այս տեսանկիւնից պատմականօրէն իրաւացի կը լինէր հասնել զոնէ մինչև Տաթևի հաշակաւոր միջնադարեան համալսարանը, որը իր կրթա-գոտարակալական աւանդները, անկասկած, փոխանցել է նաև Սկիւտարի գլխաւոր փոխաւոր՝ հիմնականում Մեծոփայ, Խնդրակատար, Սիւնեաց Մեծ-Անապատի և Ամրատու վանական բարձրագոյն գործունէութիւնի միջոցով: Սակայն հեռավէտ ընդգրկումները խնայելով և նկատի ունենալով միայն մերձաւոր անմիջական առնչութիւնները, կը գոհանանք ուշ, ԺԶ. դարի վերջերի համապատասխան պատմա-կրթական իրողութիւնների ուսումնասիրութեամբ, երբ իր գործունէութեան աւելի հաստատուն հիմքն էր դնում Բաղէշի Ամրոտուոյ կամ Ամբրատու գյուղացի, որը Սկիւտարի գլխաւոր անմիջական նախորդն էր, և ուր, ինչպէս յայտնի է, ուսանել է վերջինիս հիմնադիր մեծանուն Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը:

Ամրատու գյուղացի սկզբից ևեթ (ԺԶ. դարի վերջին) հանդէս է գալիս շատ դժուարին պատմա-փառաքական պայմաններում ու միջավայրի մէջ: Այս առումով ոչինչ չի բարեփոխում նրա գործունէութեան սղ ընթացքին: Իրար գերազանցում էին սանձարձակ անիշխանականութիւնը, դաժան հարստահարութիւնները, իրաւական լիտի խտրականութիւնը, քրտական ցեղախմբերի կամայական

բռնադատութիւններն ու վայրագութիւնները: Աէֆեան Պարսկաստանի և Օսմանեան Թիւրքիայի միջև ԺԶ. դարի սկզբին (1616 թ.) վերսկսած երկարատև կռիւնները էլ աւելի են խորացնում Հայաստանի թշուառութիւնները: Թէև նոյն ազգատեսակական իրաւովիճակն էր տիրում նրանց միջև կիսուած Հայաստանի երկու հատուածներում էլ, սակայն Թիւրքիայի տիրապետութեան ներքոյ ընկած բաժնում կացութիւնը շատ աւելի եղբարական էր փառաքական, անտեսական, իրաւական ու հոգեւոր-բարոյական տեսանկիւնից հաւասարապէս: Այս իրողութեան մէջ, բնական է, պիտի անշտանային, յաճախ խաղաղ խամբէին նաև վանական մենաստանները, որոնց մէջ, այդուհանդերձ այդ օրերին անգամ, տեղատեղ ծայր էր առնում, եփուում և ուռճանում մեր կրթական, գիտա-մշակութային կեանքն ու ազգային-հասարակական գիտակցութիւնը:

Ամրատու գյուղացի ուսումնա-կրթական շատ համեստ ժառանգութիւն ստացաւ իր անմիջական նախորդից՝ Բաղէշի Խնդրակատար Ս. Աստուածածին վանքի գլխաւորից, որը, ի դէպ, բոլորից առաւել արդիւնք ցոյց առնող ուսումնական կենտրոնն էր ամբողջ ԺԶ. դարում: Գրեզոր Արճիշեցու (Չորթթան) սաներից Ներսէս Մատաղի ջանքերով այն աւելի է աշխուժացնում իր գործունէութիւնը և բարեօք ընթացքի մէջ մնում մասնաւոր Ներսէս Բաղիշեցու, Ներսէս Ամթեցու և Յովհաննէս Բրգութեանցի ժամանակ, մինչև ԺԶ. դարի վերջերը⁽¹⁾:

Ահա, այս նոյն Յովհաննէս Բրգութեանցի անմիջական սաներից Բարսեղ Գաւառացին (նաև՝ Բաղիշեցի, Ազրակեցի, Կարպեղացի) «ի գաւաղանէն՝ որ Տաթևաւոյն յառաջ եկեալ և սերեալ»⁽²⁾, 1590ական թուականներին «վերստին հիմնարկեալ շինեաց» նախապէս «խաբխալեալ» Ամրատու վանքը⁽³⁾: Մեզ ծանօթ

(1) Ն. Ակիմեան, «Բաղէշի Գյուղացի», Վիեննա, 1902, էջ 29-66:

(2) Ա. Գաւրիկեցի, «Պատմութիւն», Վաղարշապատ, 1896, էջ 391:

(3) Նոյն տեղում, էջ 350:

նոյն պատմա-քաղաքական պայմաններն էին և միևնույն իրավիճակը: Բայց, ինչպէս միշտ, այս առիթով էլ զերազոյն ճիշդ ու նուիրում է ներգրւում և արձանագրւում են յաջողութիւններ, սկզբում, ի հարկէ, դանդաղ և համեստ, ապա՝ ծաւալուն և նշանակալից: Այս են հաստատում մեր պատմիչների գրաւոր վկայութիւնները⁽⁴⁾. ձեռագրական յիշատակարանները և ձեռագիր մատենաների հաւաքման ու բազմացման բուն փաստը: «Եւ բազումք եկին յաշակերտութիւն ի վերայ նորա և հասին յարբունս իմաստից և առին իշխանութիւն և գաւազան ...»⁽⁵⁾:

Միջնադարեան մեր բարձրագոյն դպրոցները կամ համալսարանները բոլորն էլ ունեցել են անաղական թէկուզ նուազագոյն չափով իրադարձելի ուսումնական տական նախագիծեր: Դրա մէջ լրիւ կամ թերի ընդգրկուել են «նուրը» և «լայն» (երբեմն՝ Գրիգոր Արասա Որդին) անուանուած գրքերը, «ներքին» ու «արտաքին» կամ՝ «երեակ» և «քառակ» գիտութիւնները, այսինքն՝ թէ՛ հասարակական՝ հանրային, թէ՛ ճշգրիտ՝ բնական գիտութիւնները: Սակայն, ոչ միշտ և ոչ ամէն տեղ պատշաճ ուշադրութեան արժանացել են «արտաքին» կամ «քառակ» գիտութիւնները⁽⁶⁾: Այդ ըստ մեծի

մասին կոխում ունէր որչափ ժամանակի ու տեղի թելադրանքներից, նոյնչափ էլ դպրոցի հիմնադրի կամ գլխաւոր ուսուցչական նախասիրութիւններից: Այս առնչութեամբ յատկանշական է Առաքել Դաւրիթեցու վկայութիւնը Ամրաւու դպրոցի հիմնադիր-ուսուցչական մասին. «Արդ՝ այս Բարսեղ վարդապետ յինքնէ իսկ գիտակ էր, թէ գիտութիւն արտաքին իմաստից և քերականութեան ոչ գոյ ի մէջ վարդապետացն Հայոց, և ինքն մեծաւ տարփանօք ըզձայր՝ թերեւ հասանել տանմ գիտութեան ոչ միայն վասն իւր, այլ մանաւանդ վասն ազգին, զի արծարծեալ սփռեցի ի մէջ ազգիս Հայոց, որպէսզի ամենեքեան հասցնն այնմ շնորհաց և գիտութեան: Վասն որոյ յարածամ առեալ ի ձեռս իւր զարտաքին գիրքն, և թէպէտ ոչ գիտէր, այլ անյապաղ և անձանձիր ընթեռնոյր»⁽⁷⁾: Դրեւուար չէ այստեղից հետեցնել, թէ նման գիտական նախասիրութեամբ և ազգային-լուստարական մտահոգութիւններով տաղարում ուսուցչական ղեկավարած դպրոցը պիտի ունենար որոշակի հակում դէպի յիշեալ «արտաքին» գիտութիւնները ու որոշակի միտում՝ դէպի համազգային լուստարութիւն և յառաջգիմութիւն: Այս կապակցութեամբ շատ ուշագրաւ է հետեւեալ կարեւոր վկայութիւնը՝ Բարսեղ Գաւառցու արտառուչ պատուէրը իր սաներին: Նա հրահանգում է նրանց՝ սիրել բնական-փիլիսոփայական գիտութիւնները. «քաջ գիտակս լինել սեռ, տեսակս և տարբերութիւն, և յատուկ և պատահումն, և ստորասութիւն, և բացասութիւն, որոց բազմաց և յոլովից պատահեալ էք ի մէջ Պարապմանց դրոցն [Կիւրդի-Փ. Ա.] ...»: Ու զեռ աւելին. «Եւ զայս՝ զոր ես դաս ասացի ձեզ ... և ի վերայ սորին դուք ես ամեցուցէք ... զյինէն ուսեան և զձեր գտեալն ձեր աշակերտելոցն դաս ասացէք ... և դուք

(4) Նոյն տեղում, էջ 340-407: Գր. Գաւառցի, «Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1915, էջ 390-392:

(5) Գր. Գաւառցի, նշուած աշխատութիւնը, էջ 391:

(6) Թէև այս անուանումներով մատնանշուած են յատկապէս թուագիտութիւնը, աստղաբաշխութիւնը, երաժշտութիւնն ու երկրաչափութիւնը և զբանց վերաբերեալ գրքերը, սակայն, ինչպէս յայտնի է, միայն զբանցով էին սահմանափակուած մեր և օտար միջնադարեան նոյն բնոյթի բարձրագոյն դպրոցներում դասաւանդուող ճշգրիտ գիտութիւնները. կար նաև ալքիմիա, բժշկագիտութիւն, մարդակազմութիւն, տոմարագիտութիւն և այլն: Ուստի, սոյն բնոյթի նիւթերը ես մաս էին կազմում այս սահմանումներին և յիշեալ ուսումնական ծրագրերին:

Նուրբ գիրքեր անուան տակ սովորաբար հասկացուած էր Եկեղեցական Հայրերի որոշ

բնագրերի մեկնաբանական, աստուածաբանական, իմաստասիրական երկերը, իսկ չլայն գրքերը՝ Հին և Նոր կտակարանի գրքերն էին:

(7) Ա. Գաւրիթեցի, նշուած աշխատութիւնը, էջ 391:

ևս պատուիրեցէք ձերոց աշակերտելոցն՝ զի ըստ այսմ օրինակի արասցեն . . .»⁽⁸⁾։ Կարելի է վստահօրէն հաստատել, որ նրա սաները հաւատարիմ մնացին իր թողած աւանդներին ու հրահանգներին, ի մասնաւորի Ամրատու դպրոցի մեծ բարունապետներից վերջինը՝ Վարդան Բաղիշեցին, որի օրոք դպրոցը ապրում է իր գործունէութեան ամենաեռանդուն և ամենաարդիւնաւէտ շրջանը։

Այսպիսով բնական ու ճշգրիտ գիտութիւնների նկատմամբ հետաքրքրութիւն ու սէր աճեցնելու և դրանք ուսումնական պարտադիր ծրագրի մաս դարձնելու ջանքերը Ամրատու դպրոցի առաւել գնահատելի ծառայութիւններից են։ Ընդգծելի մի հանգամանք էլ այն է, որ այս դպրոցից համապատասխան պատուստ ու խմբում ստացան նոյն ժամանակներում ստեղծուած (1615 թ.) Սիւնեաց Մեծ Անապատի վանական-ուսումնական կենտրոնը և նրա շառաւիղներից՝ Լիւթ, Կառն և Երեւանի Անանիոս առաքելի անապատները, Յովհաննավանքի և Էջմիածնի դպրոցները, Ամրատու դպրոցի առաջին տարիների սան Ներսէս Մոկացու (Բեղլու) և վերջինս աշակերտ Մէլքիսեթ Վժանեցու անխնայ ջանքերի շնորհիւ։ Այս հանգամանքը առանձնապէս կարեւոր նշանակութիւն է ստանում նաեւ այնու, որ, ինչպէս ճիշդ նկատուած է արդէն, Սիւնեաց Մեծ Անապատը ազգային, եկեղեցական ու կրթական նոր դարձնալի հիմնական առանցք է հանդիսանում ժե. դարի մասյլ իրականութեան մէջ։ Ծշմարիտ է միաժամանակ այն, որ Ամրատու և Սիւնեաց Մեծ Անապատի դպրոցները Սէֆեան Պարսկաստանի և Օսմանեան Թիւրքիայի միջև ծաւալուած երկարատեւ (ԺԶ. դարի սկզբից մինչև ժե. դարի առաջին տասնամակները) պատերազմների ընթացքում հիւժուած ու խաւարային կեանքի դատապարտուած Հայաստանի համար կրթական ու հոգեւոր-բարոյական զոյգ լուսարձակներ եղան. առաջինը՝ բացուած Արեւմտեան, երկրորդը՝ Արեւելեան Հայաստանի վրայ։

Սկիւտարի հիմնադիր-ուսուցչապետ՝ Յովհաննէս Կոյոտ, ինչպէս ասուեց քիչ վերը, Ամրատու դպրոցի սան էր դըպրոցի լաւագոյն տարիներին, երբ նրա ղեկավարն էր Կոյոտի իսկ յորջորջմամբ՝ «տիեզերալուս վարդապետ» Վարդան Բաղիշեցին։ Ի՞նչն էր առաւել յատկանշական այս շրջանում դպրոցից ներս, որը այնքան խորը հետք կարող էր թողնել Յովհաննէս Կոյոտի մատուր ու հոգեկան աշխատհի ձեւաւորման և հետագայ կեանքի ու գործունէութեան ընթացքի վրայ։ Վարդան Բաղիշեցին ընդհանրապէս Հայ միջնադարեան դպրոցական ու գիտամշակութային կեանքի և յատկապէս Ամրատու վանական բարձրագոյն դպրոցի ամենաբանիմաց և «արդիւնական» բարունապետներից մէկն է։ Իր վանայրութեան և ուսուցչապետութեան տարիներին Ամրատու վերածուեց լաւ կազմակերպուած ծաղկուն ու բարգաւաճ ուսումնական կենտրոնի։ Զգալի չափով աճեց ուսանողութեան թիւը, ունեցաւ ուսումնա-գիտական բարձր մակարդակի հասած ուսուցչական կազմ։ Հետեւողական ու ջանադիր մատուր և կրթական աշխատանքների շնորհիւ գիտամշակութային ստեղծագործութեան լիարժէք միջնուրար էր ստեղծուել այնտեղ, հակառակ միջավայրի առական դառնութիւններին։ Ուսումնառական առօրեայ զրազման ու ծրագրի կարեւոր մի բնագաւառը շարունակուած էր մնալ բնական, «բարտաքին» գիտութիւնների և «նուրբ զբրեանց» ուսումնասիրութիւնը։ Վարդան Բաղիշեցու աշակերտներից մէկի՝ Աբրահամ Համթեցու արժանիքները թուելիս, ընդգծուած է նրա «այլ և արհմնայ և նրբից և քննականութեան տեղեկ էր»⁽⁹⁾։ Նշանակուած է, իրապէս, վերոյիշեալ գիտութիւնները շարունակաբար ուսուցուել են այնտեղ, այն էլ՝ ըստ արժանւոյն։

Կռակածից վեր է, անշուշտ, որ հանրակրթական գիտական նիւթերը կազմում էին դասաւանդութիւնների բուն առանցքը, ինչպէս նախորդած բոլոր մեր վանական բարձրագոյն դպրոցներում, և,

(8) Նոյն տեղում, էջ 393։

(9) Ն. Ակիմեան, նշուած աշխատութիւնը, էջ 209։

դատելով այստեղ կուտակուած և այստեղ արարուած գրչագրական յուշարձաններ թւից, ծաւալից և գիտական ու գեղարուեստական տարգուծիւնից, յիշեալ նիւթերը այստեղ ունեցել են անգամ պատշաճ գիտական խորք ու մակարդակ: Առանձնապէս նկատելի է, թերեւս աւելի քան որեւէ այլ տեղ, հետեւողական ու գործնական հետաքրքրութիւնը պատմական նիւթերի, մասնաւորաբար Հայ պատմագրութեան բազմաթիւ յուշարձանների նկատմամբ, որոնք, անկասկած, ծառայում էին նաև ուսուցողական նպատակներին: Առ այսօր պահպանուած ձեռագիրները մեր պատմիչներից կորիւնի, Ագաթանգեղոսի, Փաւստոս Բազանդի, Եղիշէի, Ղազար Փարպեցու, Մովսէս Խորենացու, Սերէոսի, Ղևոնդ Երէցի, Յովհաննէս Դրասխանակերտցու, Սամուէլ Անեցու, Կիրակոս Գանձակեցու և այլոց պատմագրական երկերի երբեմն հնագոյն ընդօրինակութիւններն են: Հայ պատմագրութեան նկատմամբ այսքան հաստատուն ու նպատակամէտ վերաբերմունքը ունէր ոչ միայն գիտական ու կրթական, այլև զատառարակչական ու հայրենասիրական նկատառումներ: Քաջ յայտնի է Հայ պատմագրութեան գործուն գերը Հայ ժողովրդի հոգեկան կերտուածքի, զազափարական մղման, ազգային արժանապատուութեան և գիտակցութեան ձեւաւորման ու զարգացման վրայ, յատկապէս վերոյիշեալ ժամանակներում մեղ յայտնի չափազանց դժուարին պայմաններում խիստ բարոյալքուած, տառապալից Հայ ժողովրդի համար: Այս առումով Հայ պատմագրութիւնը ամենայնուայի և ամենաբազմալի միջոցն էր նաև այդ օրերին: Այս շատ նշանակալից էր առաւելապէս բուն դպրոցի սաների ոգեկան և գիտակցական կազմաւորման համար: Դա որոշակի նկատելի է նրանց հետագայ եկեղեցական, ազգային և մշակութային գործունէութեան մէջ: Վկայ իր՝ Յովհաննէս Կալոտի և աշակերտակից Գրիգոր Շղթալակիի ողջ կեանքն ու գործը:

Բայց ոչ միայն պատմագրութիւնն էր այսքան և այսպիսի ուշադրութեան արժանաւորում: Առաւելապէս վարդան Բա-

ղիշեցու տարիներին և նրա անմիջական ջանքերով բազմաթիւ ձեռագիրներ են հաւաքուած շրջակայ գաւառներից: Ինչպէս Ամրտուլու, այնպէս էլ Մշոյ Առաքելոց վանքում եղած ձեռագիրները վերանորոգուած և դրւած են աւելի լուրջ խնամքի ներքոյ: Նման նպատակի համար բաւարար չեն համարուած վանքում ապրող կազմողները, նորագոյները, գրիչները և ծաղկողները: Այդպիսիք հրաւիրւած են Հայաստանի տարբեր վայրերից: Յատկապէս յիշատակելի է Վասպուրականից հրաւիրուած Սահակ Վանեցին, որը բազմաթիւ ձեռագիրներ է նորագում, կազմում ու ծաղկում: Սակայն, աւելի շատ ուշադրութիւն էր նուիրւում ձեռագրական նոր ընդօրինակութիւնների բազմացմանը՝ վանքի ձեռագրատան հաւաքածոն առաւել ճոխացնելու և, անշուշտ, ուսումնագիտական հարուստ պաշար ստեղծելու նպատակով: Հարկ է գիտել տալ, որ Բաղէշի և հետագայ այլ շրջանների վանքերի կորիւնները ևս բաւարարուած էին այստեղ արարուած ձեռագիր մատենաներով: Քիչ վերը նշուեց, որ այստեղ յատուկ նպատակագրութեամբ ընդօրինակուած են Հայ պատմագրութեան բոլոր մինչ այդ յայտնի յուշարձանները: Բայց նաև՝ բազմաթիւ Աւետարաններ, Ճշոցներ, Յայտմաւարքներ, Մաշտոցներ, Շարակնոցներ, Մեկնութիւններ, քերականական, իմաստասիրական և այլ այսօրինակ երկեր: Սոյն մեծ ջանասիրութիւն և մատուր ու ձեռագործական լայն հմտութիւն պահանջող գիտա-մշակութային ձեռնարկումները համապատասխանաբար հաստատուած են, որ Ամրտուլու այս վանքում իրապէս բարգաւաճ վիճակում էին մագաղաթի ու թղթի մշակման միջոցները, կազմարարական, գրչութեան և ծաղկարարական արուեստը: Այս գործում իր շատ կարեւոր բաժինն ունեցել է վերոյիշեալ Սահակ Վանեցին, որը ոչ միայն ի գործ է դրել իր հմտալից արուեստը, այլև ուսուցել է այն:

Յատկանշական է նաև այն, որ ձեռագրագիտական առաջին ցուցակը, նոյն ինքն Վարդան Բաղիշեցու հեղինակութեամբ, մեղ է հասել այս դպրեմանքից:

Սա ինքնին մի պերճախօս վկայութիւն է ձեռագիր մատեանների գիտական գնահատման և դրանց պահպանութեան նկատմամբ ցուցարկերուած գործուն հոգատարութեան:

Վանքի, և ոչ միայն Ամբաստու վանքի, այլև ընդհանրապէս Հայ եկեղեցական ու աղգային-հասարակական կեանքի բարեկարգման մեծ ու դժուարին խնդիրը ևս չէ վերնադաս անդի ուսուցչապետ-վանահայրերի ուշադրութիւնից: Ինչպէս արդէն նշուեց քիչ վերը, Բաղէշի և աւելի հեռու գաւառների մենաստանների համար ևս ծիսական ու եկեղեցական-կրօնական ընդթի ձեռագիր մատեաններ էին ընդօրինակուած: Ինքը՝ Վարդան Բաղէշեցին երբեմն իրրեւ դպրեմանքի բարեւնապետ՝ «հանդերձ աշակերտօք», երբեմն էլ՝ իրրեւ հայրապետական նուիրակ եղել է տարբեր վանական կենտրոններում՝ Լիմ, Տարօն, Վան, Նոր-Ջուղայ, Երուսաղէմ, առաւելարար նպատակ ունենալով Հայաստանեայց եկեղեցու հոգեւոր-կրթական ու վարչա-անասնական կեանքի բարելաւումը: Քաջ յայտնի է, որ իր ստները այս մարդու էլ խիստ ազնիւ ժառանգութիւն

էին ստանում, ինչպէս յստակ կարելի է եզրակացնել թէկուզ միայն Յովհաննէս Կոլոտ ու Գրիգոր Շղթայակի բարեկարգի և Արթուր Սոթարեցի կրթողիկոսի բարենորոգչական ծաւալուն աւարդիւնաշատ գործունէութիւնից:

Ահա, ուսումնա-կրթական, գիտամշակութային և աղգային-եկեղեցական այս պայմանների ու միջավայրի մէջ էին թրծուած Յովհաննէս Կոլոտի հոգեկան հարուստ աշխարհն ու աննկուն նկարագիրը և արդիւնաւորուած մտաւոր կարողութիւնները:

Այս քանից յետոյ միայն աւելի յստակ պատճառաբանելի, հիմնուոր ու բմբունելի կը դառնան նրա կեանքի և գործունէութեան տարբեր հանգրուանները: Ամբաստու այս դպրեմանքում ստացած դաստիարակութիւնն ու կրթութիւնը կարելի դարձրին նրան բմբունելու Հայ իրականութեան ժամանակակից աղգային-եկեղեցական կեանքի պահանջներն ու թելադրանքները և իրագործելու համապատասխան ճշգրիտ ու շինարար իրագործումներ, որոնց շարքին՝ Սկիւտարի «Իպրատունը»:

(Շարունակելի)

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ